ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գոյականի հոլովների ուսուցումը
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Հովսեփյան Շահանե
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… էջ 3

Գլուխ 1. Հոլովի քերականական կարգը …… էջ 4

1.1 Հայերենի հոլովման համակարգը …… էջ 8

Գլուխ 2. Հոլովների ուսուցումը …… էջ 13

2.1 Հոլովների ուսուցման դասի պլան ԽԻԿ համակարգով …… էջ 19

Եզրակացություն ……... էջ 22

Օգտագործված գրականության ցանկ …… էջ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Ահա հենց այդ պատճառով էլ, շատ կարևոր է հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի ուսումնառությունը: Մայրենի լեզվի ուսումնառության գլխավոր շեշտադրումներից մեկը պիտի լինի գրական լեզվի նորմերին տիրապետելը և արդյունավետ բանավոր հաղորդակցություն ունենալը: Գեղեցիկ և գրագետ խոսք ունենալու համար աշակերտները պետք է կարողանան տարբերակել գոյականի հոլովները, կատարել հոլովումներ և խոսքի մեջ օգտագործել ձևաբանորեն ճիշտ կառուցված բառեր: Այդ հմտությունների միջոցով կկառուցվի ճիշտ բանավոր խոսք և գրագետ հաղորդակցութուն:

Աշխատանքի նպատակն է անդրադառնալ գոյականի հոլովի քերականական կարգին, ուսումնասիրել հոլովների համակարգը: Ինչպես նաև տվյալ թեմայի դասավանդմանը դպրոցում:

Առաջադրված խնդիրն է.

- ուսումնասիրել հոլովների համակարգը
- համառոտ ներկայացնել հոլովների տեսակները
- առաջադրել ԽԻԿ համակարգով կառուցված դասի պլան-նմուշ օրինակ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում խոսել ենք հոլովների քերականական կարգի և հոլովման համակարգի մասին:

Երկրորդ գլխում արդեն հոլովների ուսուցման մասին և ներկայացրել դասի պլան ԽԻԿ համկարգով:

Եզրակացություններ բաժնում տվել ենք կատարված աշխատանքի արդյունքում ամփոփ շարադրանք:

ԳԼՈՒԽ 1. ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հոլովը գոյականի, գոյականաբար առնված այլ խոսքի մասի և առարկայանիշ դերանվան քերականական կարգ է: Հոլովը բառի իմաստի և ձևի միասնական դրսևորում է, որով էլ պայմանավորված է բառի շարահյուսական պաշտոնը:

Առանց բառաձևի հոլով չկա, նկատի են առնվում ոչ միայն բառերի հոլովակազմիչ ձևույթները, այլև բառերի ներքին թեքումը (տուն-տան, հայր-հոր, անուն-անվան, միություն-միության):

Ըստ այն բանի, թե հարացուցային մակարդակում բառը տվյալ լեզվում ձևաիմաստային քանի տեսակի փոփոխության է ենթարկվում, տվյալ լեզվում այդքան էլ հոլով կա: Հարացուցային միավորը որոշվում է ոչ միայն բառաձևի, այլև նրա իմաստի հաշվառմամբ, այսինքն՝ յուրաքանչյուր հոլով որոշվում է հոլովական ձևի և իմաստի միասնությամբ:

Այն լեզուներում, որոնցում բառը բառաձևային փոփոխությունների չի ենթարկվում, դրանցում բառի շարահյուսական իմաստները որոշվում են նախդիրների միջոցով:

Աշխարհում կան շատ լեզուներ, որոնցում բառը հարացուցային մակարդակում ավելի շատ փոփոխությունների է ենթարկվում, այսինքն՝ ավելի շատ հոլովակազմիչ ձևույթներ է ստանում, ուրեմն այդ լեզուներում հոլովների քանակն ավելի շատ է:

Փորձենք հասկանալ թե քանի հոլով ունի հայերենը:

Անվանի գրաբարագետ Միքայել Չամչյանը գրաբարում նշում է 10 հոլով (ժամանակակից հայերենի 7 հոլովներն ներառյալ նաև պատմական (ի քաղաքէ), պարառական (գքաղաքաւ) և կոչական (Ո՞վ Աստուած)): Այժմ գրաբարում դիտարկվում է 6 հոլով՝ առանց ներգոյականի: Նույն է նաև արևմտահայերենում:

Արևելահայ աշխարհաբարի քերականության հիմնադիր Ստեփանոս Պալասանյանն արդի հայերենում ընդունում է 7 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:

Բազմավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանը, առանջնորդվելով զուտ ձևաբանական սկզբունքով, գրում է. «Մի գոյական հոլովել, նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ունենալ գոյականը» («Աշխարհաբարի քերականություն», Վաղարշապատ, 1906, էջ 134):

Մ. Աբեղյանը նույնացնելով ուղղականն ու հայցականը, սեռականն ու տրականը որպես նույն ձևույթներն ունեցող հոլովներ, հայերենում ընդունում է 5 հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական: Մ. Աբեղյանը և նրա հետևորդները սեռական և հայցական հոլովները հանում են հարացույցից, որովհետև հայցականն իր ձևույթները (հոլովական վերջավորությունները) չունի և ուղիղ խնդրի՝ անձի և անձի առման դեպքում այն նման է տրականին (Երեխան սիրում է մայրիկին և տիկնիկին), իսկ իրի և իրի առման դեպքում հայցականը նման է ուղղականին («Երեխան կարդում է գիրքը» և «Հիվանդի համար բժիշկ հրավիրեցին»): Իսկ սեռական հոլովը նույնացնում են տրականի հետ:

Նրանք անտեսում են որոշիչ հոդի հոլովատարբերակիչ դերը: Բայց շարահյուսական մակարդակում Աբեղյանն, ընդունելով որոշիչ հոդի դերը և բառերի շարահյուսական պաշտոնները, ընդունում է 7 հոլով: Ըստ նշանակության նա առանձին հոլով է համարում նաև կոչականը:

Աբեղյանի 5 հոլովի տեսությունը գերիշխեց մինչև 1930-ական թվականները, երբ լեզվաբաններ Արարատ Ղարիբյանն ու Գուրգեն Սևակը հիմնավորեցին 7 հոլովի համակարգը, և դպրոցներում և բուհերում դասավանդվեց 7 հոլովը մինչև 1967 թվի հայտնի բանավեճը, որից հետո մասնագետները միասնական կարծիքի չեկան: Լեզվաբանների նոր սերունդը՝ Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Մ. Ասատրյան, Հ. Բարսեղյան, Ա. Պապոյան էլի ուրիշները ընդունեցին 5 հոլովի համակարգ: Էդուարդ Աղայանն ու Ռաֆայել Իշխանյանն, ընդունելով որոշիչ հոդի իմաստազատիչ դերը, ընդունեցին 6 հոլով՝ սեռականը համարելով առանձին հոլով՝ մանավանդ որ անձնական դերանունների սեռական և տրական հոլովները լրիվ տարբեր ձևեր ունեն և տարբեր իմաստներ՝

				որպես անձ
Ուղղական	ես, դու	նա, մենք	դուք, ինքը	սա, դա
Սեռական	իմ, քո	նրա, մեր	ձեր, իր	սրա, դրա
Տրական	ինձ, քեզ	նրան, մեզ	ձեզ, իրեն	սրան, դրան

Այդուհանդերձ, բանավեճից հետո՝ առ այսօր, թե դպրոցներում և գրեթե բոլոր բուհերում (բացի Երևանի պետական համալսարանից) դասավանդվում է 7 հոլովը, որը

ավելի ճիշտ է և տրամաբանական, որովհետև հաշվի է առնվում բառի և՛ ձևը, և՛ իմաստը:

Հոլովը որոշվում է բառի հոլովական ձևի և իմաստի միասնությամբ, այն ունի իր ձևային և իմաստային հատկանիշները, բայց հայտնի է, որ նույն հոլովն ունի թե՛ տարբեր ձևեր և թե՛ տարբեր իմաստներ, ասենք սեռականը՝ ի, ու, ան, ոջ, վա, ց (նաև մյուս ձևերն ու ներքին հոլովումները), բայց դրանք բոլորն էլ ունեն նույն իմաստները, այդպես էլ՝ բացառականը՝ ից, ուց, գործիականը՝ ով, բ, մյուս կողմից էլ՝ նույն հոլովով տարբեր անդամներ են դրվում:

Հենց այս առումով էլ պետք է նկատի ունենալ, թե տվյալ հոլովի համար ո՞ր պաշտոնն է *գլխավոր* համարվում: Հայտնի է, որ ուղղակիի համար գլխավորը *ենթակայի* պաշտոնն է, հայցականի համար՝ *ուղիղ խնդրինը*, սեռականի համար՝ *հատկացուցչինը*, բացառականի համար *անջատման* գաղափարն է առաջնայինը, գործիականի համար՝ *միջոցը*, ներգոյականի համար *տեղը, ժամանակը*:

Ուրեմն՝ յուրաքանչյուր հոլովի ընդհանուր իմաստը բնութագրելիս պետք է ներկայացնել բառաձևը, տվյալ հոլովի գլխավոր իմաստը, ինչպես նաև բառերի շարահյուսական կիրառությունները[1]:

Բոլոր հոլովները, ըստ իրենց իմաստի, կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբին են պատկանում են այն հոլովները, որոնք արտահայտում են սուբյեկտ-օբյեկտային և հատկանշային, ինչպես և գործողության ու խնդրի հարաբերությունները: Երկրորդ խմբին պատկանում են այն հոլովները, որոնք արտահայտում են տարածական հարաբերություններ: Այս բաժանման համապատասխան էլ դեռևս անցյալ դարում լեզվաբանության մեջ ստեղծվել է հոլովների ծագման երկու տեսություն՝ տրամաբանական և տեղաբանական: Ըստ տրամաբանական տեսության հոլովներն առաջացրել են ենթակայի, խնդրի և հատկացուցչի ու որոշիչի հարաբերությունները նախադասության մեջ նշելու պահանջից: Տեղաբանական տեսության համաձայն հալովներն առաջացել են տարածական հարաբերությունները նշելու պահանջից: Սակայն այս երկու տեսություններն էլ միակողմանի են հենց այն պատճառով, որ իբրև ելակետ են ունենում միայն հնդեվրոպական հին գրական լեզուները, մինչդեռ

[1] Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան, 2010, էջ 39-42:

բազմաթիվ ուրիշ լեզուների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոլովները շատ տարբեր են լինում:

Բազմաթիվ հոլովների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես իմաստային տեսակետից հոլովները բաժանվում են երկու հիմնական խմբի, այնպես էլ նրանց առաջացումն ու զարգացումը կատարվում է երկու ուղղությամբ:

Տարածական հարաբերություններ արտահայտող հոլովները նախապես հանդես են գալիս իբրև իրահարաբերական հասկացություններ. սկզբում չկան հոլովական վերջավորություններ, կան տարածական հարաբերություններ արտահայտող բառակազմական մասնիկներ, որոնք լրացուցիչ նշանակություն են տալիս բառերին: Հետագայում այդ տարածական հարաբերությունները է՛լ ավելի կոնկրետանում են և առաջ են բերում տարածական հարաբերություններ արտահայտող հոլովների մի ամբողջ համակարգ: Վերջապես ավելի զարգանալով՝ այդ տեղային-տարածական հոլովները ձուլվում, միանում են իրար՝ մի կողմից և մյուս կողմից՝ միանում են ենթակայի ու խնդրի հարաբերությունն արտահայտող հոլովներին: Այսպես է ստացվել, օրինակ, հայերեն բացառականի այժմյան իմաստը (հեռացում, անջատում և սերում), որով արտահայտվում է նաև գործողության աղբյուրը՝ բնական ենթական (որդին սիրվում է հորից):

Հոլովների մյուս խմբի՝ ենթակայի, խնդրի ու հատկացուցչի հարաբերությունն արտահայտող հոլովների առաջացումը արդյունք է առարկայի ներգործող կամ ներգործվող լինելու հասկացության. որը հանդես է գալիս այն պահից իսկ, երբ առաջանում է նախադասությունը:

Հոլովի քերականական կարգը սովորաբար կայուն է, բայց այդ չի նշանակում, թե նա հավիտենական է: Ժամանակակից հայերենն, օրինակ, պահպանում է հին հայերենի հոլովները, մինչդեռ ուրիշ լեզուներ, օրինակ ֆրանսերենն ու անգլերենը, կորցնում են հոլովները: Հոլովների կորուստով էլ հաճախ պայմանավորված է լեզուների անցումը համադրականի համակարգից դեպի վերլուծականը[2]:

[2]Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 491-492:

ԳԼՈՒԽ 1.1 ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուղղական հոլովը գործող անձի, ենթակայի հոլովն է ըստ իմաստի, միաժամանակ բառի ուղիղ, ելակետային ձևն է՝ հոլովական զրո վերջավորությամբ:

Ուղղական հոլովով արտահայտվում են՝

ա. ենթական. *Վաղորդյան* ***մառախուղը*** *նոսրանում էր:* ***Արմանը*** *գեղեցիկ է երգում:*

բ. ստորոգելիական վերադիրը (ստորոգելին). *Լուիզան մի գեղեցկահասակ, սիրուն դեմքով, մեծ ու սևորակ աչքերով* ***աղջիկ*** *է:* ***Սրիկա*** *է նա, որ հայր չի լինում:*

գ. կոչականը. *Պտտվի՛ր, պտտվի՛ր* ***կարուսե՛լ****, ես քո երգը վաղուց եմ լսել: Սև-սև,* ***ամպեր****, հեռացե՛ք…*

դ. գոյական որոշիչը. ***Ծաղիկ*** *հասակը գերում էր բոլորին:* ***Ցնորք*** *հուշերով ամոքի՛ր հոգիս:*

ե. անվանական անդեմ նախադասության գլխավոր անդամը. *Դալուկ* ***դաշտեր****, մերկ* ***անտառ****… Մահացողի տխուր* ***կյանք****: Ահա մեր* ***գետը****, մեր զուլալ* ***գետը****:*

Սեռական հոլովը ցույց է տալիս սերում, պատկանելիություն, հատկացում, ամբողջի և մասի հարաբերություն, ունի իր հոլովման համապատասխան ձևերը հատկապես դերանվանական հոլովման դեպքում, իսկ գոյականի դեպքում հաճախ նմանվում է տրական հոլովի ձևերին, թեև ունի իր առանձնահատկությունները, նախ, որ արտահայտում է զուտ առարկաների միջև դրսևորվող հարաբերություն և ապա՝ անխտիր գործ է ածվում առանց հոդի: Սեռական հոլովն արտահայտվում է ***–ի, -ու, -ան, -յան(ա), -ոջ, -վա, -ց*** հոլովիչներով կամ հոլովացուցիչներով:

Սեռականը տրականից տարբերվում է նաև նրանով, որ սեռականը անկախաբար չի գործածվում և բառակապակցությունից դուրս չի հասկացվում, իսկ տրականը, ընդհակառակը, անկախաբար գործածվում և իր նշանակությամբ շատ պարզ գիտակցվում է, ինչպես՝ Թուղթ Ակ. Բակունցին, կամ հատկապես վերնագրերում և ուղերձներում, ինչպես՝ «Մայրիկիս», «Հայ գրողներին», «Երևանին» և այլն:

Սեռական հոլովով են դրվում.

ա. Հատկացուցիչը. Ես *իմ* անուշ *Հայաստանի* արևահամ բառն եմ սիրում: *Այգու ծառերը* բուրումնավետ են:

Նշված կիրառությունների դեպքում սեռական հոլովով կարող է արտահայտվել ոչ միայն պատկանելություն, այլև սերում և ծագում: Այսպես՝ եթե *Արամի նկարը*

կապակցության մեջ մի դեպքում նշանակում է, որ նկարը պատկանում է Արամին (պատկանելություն), ապա մյուս դեպքերում կարող է արտահայտել նաև սերում և ծագում՝ Արամին ներկայացնող և Արամի կողմից նկարված նկարը:

բ. Գոյական որոշիչը. *Նա սիրում էր **սարի** ծաղիկ, դաշտի շուշան: Եկան **գարնան** անուշ օրերը*:

գ. Կողմնակի ենթական. ***Ամպի** գոռալը անձրևի նշան է: **Աշակերտի** հեռանալը ուսուցչին դուր չեկավ:*

դ. Մասնակի բացահայտիչը. ***Երևանի**՝ մեր մայրաքաղաքի փողոցները լայն են ու գեղեցիկ: **Արմանի**՝ թռռնիկիս նկարները գրավիչ են:*

Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում, տրվում, մոտենում է որևէ անձ կամ առարկա և ըստ այդմ արտահայտում է առարկայի կամ գործողության միջև ոչ ուղղակիորեն դրսևորվող հարաբերություն: Տրական հոլովի վերջավորությունները հիմնականում նույնն են, ինչ նշվեց սեռական հոլովի դեպքում:

Տրական հոլովով հիմնականում գործածվում են հանգման, մատուցման անուղղակի խնդիրները. Օրինակ՝ *Նավակը մոտեցավ **գետափին**: Պարգևը հանձնեցին **հաղթողին**:*

Տրական հոլովով են հանդես գալիս նաև նպատակի պարագան՝ *Նա գնաց աղբյուր **ջրի**: Գյուղ էին իջել աղջիկ տեսնելու, **պարի** ու **կռիվի**,* տեղի պարագան՝ *Փերիները սարի **գլխին** հավաքվեցին գիշերով,* ժամանակի պարագան՝ ***Լուսաբացին** նա բարձրացավ կախաղան:*

Հայցական հոլովը և՛ ձևով, և՛ իմաստով ինքնուրույն, առանձին հոլով է, ցույց է տալիս առարկայի և գործողության միջև ուղղակիորեն դրսևորվող հարաբերություն և չնայած ձևով նման է ուղղականին և տրականին, բայց իր արտահայտած իմաստով և շարահյուսական կիրառությամբ բոլորովին տարբերվում է նրանցից: Հայցական հոլովով հիմնականում արտահայտվում է ուղիղ խնդիրը, այն կրող խնդրի հոլովն է. Օրինակ՝ *Սիրում եմ մեր **երկինքը** մուգ, **ջրերը** ջինջ, **լիճը** լուսե: Նա վերցրեց **բաժակը**:*

Հայցական հոլովով երկրորդական նշանակությամբ կարող են արտահայտվել նաև.

ա) Տեղի պարագան՝ *Մարոն ատեց իր մարդուն, փախավ եկավ իր հոր **տուն**: Եվ ինքը թեթև սլացավ **եթեր**:*

բ) Ժամանակի պարագան՝ *Մի **առավոտ** վեր կացավ գնաց քաղաք: **Ամեն օր** կանգնում էր պատշգամբում և նայում հեռուները:*

գ) Նպատակի պարագան՝ *Կիրակի օրը **ուխտ** են գնում: Ոչխարդ բե՛ր **կիթ**:*

դ) Չափ ու քանակի պարագա՝ *Ամեն ինչյունը **դարեր** է ապրում: Գիրքն արժե **հարյուր դրամ:***

Հայցական հոլովը, բազմաթիվ կապերի հետ գործածվելով, կարող է արտահայտել նաև շարահյուսական այլ պաշտոններ:

Բացառական հոլովը ցույց է տալիս բացառման, անջատման, հեռացման իմաստ, այն առարկան, որից սկսվում կամ սերում է գործողությունը, ինչպես՝ *Վտակը **ժայռից** ներքև է թռչում: Ինձ տարե՛ք այս խավար **աշխարհից**:*

Բացառական հոլովը ձևավորվում է -ից և ուց վերջավորություններով և նախադասության մեջ կարող է հանդես գալ խնդրային և պարագայական կիրառություններով և լինում է.

ա) Անջատման անուղակի խնդիր՝ *Ինձ ազատե՛ք այս տարամերժ **մտքերից**: Հեռացնում էին որդուն **ծնողից**, եղբայրը **եղբորից**, կինը **ամուսնուց**:*

բ) ներգործման անուղղակի խնդիր, որը սովորաբար գործ է ածվում կրավորական սեռի բայերի հետ և ցույց է տալիս այն առարկան, որի գործողությունը քերականական ենթակային վերագրվում, ինչպես՝ *Ծառերը շարվում էին **քամուց**: Քաղաքը գրավվեց **թշնամուց** (կամ՝ կողմից):*

գ) Վերաբերության խնդիր՝ *Խոսում էին Լոռվա **քաջերից**: Պատմում էին իրենց ցավ ու **դարդից**, իրենց **կյանքից**:*

դ) Մասնակի ուղիղ խնդիրը՝ *Յարս էլ խմեց էդ **ջրից**: Մի պատառ կերավ սև **հացից**:*

ե) Տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի պարագաներ, ինպես՝ *Նա դուրս եկավ խավարի **գնդանից**: Այդ պատմությունը գալիս էր հին **ժամանակներից**: Այն **օրվանից** նա այդ բանը չի մոռացել: Եվ հառաչեցին լեռները **ցավից**:*

զ) Գոյականական անդամի լրացում, ինչպես՝ ***բրդից** վերարկու, **խելքից** պատուհաս, **տեսողությունից** թույլ, թռիչք **գնացքից*** և այլն:

Գործիական հոլովն ունի *ով* և *բ* վերջավորությունները և ցույց է տալիս այն առարկան, որով կամ որի միջոցով կատարվում է գործողությունը: Գործիական հոլովի հիմնական կիրառությունը նախադասության մեջ միջոցի աննուղակի խնդիրն է, ինչպես՝ *Տանտերերը աղ ու հացով դիմավորեցին հյուրերին: Լուսաբացին նրանք մեկնեցին ինքնաթիռով:*

Գործիական հոլով կարող են արտահայտվել.

ա) Ներգործման աննուղակի խնդիր՝ *Ամպերը ծակվեցին **մառախուղով**: Երկինքը լցվեց մռայլ **ամպերով**:*

բ) Տեղի պարագան՝ *Կաքավաբերդի **քարափով** բարձրանում էին երեք ձրավոր: Քայլում էին կանաչազարդ **պուրակով**:*

գ) Ժամանակի պարագա. *Փերիները սարի գլխին հավաքվեցին **գիշերով**: Մեկնեցին արձակուրդ մեկ **ամսով**:*

դ) Ձևի պարագա. *Նա **հիացմունքով** էլ խոսում ընկերոջդ մասին: Նա **վազելով** անցավ ողջ տարածքը:*

ե) Հիմունքի, պատճառի, չափի ու քանակի պարագաները. *Տնօրենի **հրամանով** նշանակվեց աշխատանքի: Նա բացակայեց տանից մեկ **շաբաթով**: Ուսանողը գիրքը գնեց հազար **դրամով**:*

զ) Գոյական որոշիչը. *Ֆետրե **գլխարկով** մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը: Ուսուցիչը սիրում էր **խնձորով** տոլմա:*

Ներգոյական հոլովը կազմվում է *–ում* վերջավորությամբ և ցույց է տալիս այն տեղը, որտեղ և որի սահմաններում կատարվում է գործողությունը: Ներգոյական հոլովով հանդես են գալիս տեղի և ժամանակի պարագաները, ինչպես՝ *Նրանք կռվում էին մարտի **դաշտում**: **Մի տարում** ավարտեց աշխատանքը: **Քառասուն տարում** նա ա՛խ չէր քաշել իր օրում:*

Հայերենում ոչ բոլոր ներգոյականներն են, որ ներգոյական են կազմում *–ում* վերջավորությամբ: Գոյականների զգալի մասը այս հոլովը կազմում է սեռական հոլովի և *մեջ* կապի կապակցությամբ: Այս գոյականների խմբին են դասվում.

ա) վերացական գոյականները. *քաջություն, ազնվություն, ժողովրդավարություն, զգացում, բորբոքում, զարմանք, թախիծ, երկյուղ, վախ, սեր, սարսափ* և այլն:

բ) Հատուկ և հասարակ անձնանունները, *Աշոտ, Անահիտ, Հասմիկ, Վահանյան, թագավոր, գյուղացի, թշնամի, ուսանող, տնօրեն, բժիշկ, եղբայր, հայր, մայր* և այլն:

գ) Հավաքական իմաստ արտահայտող և ժամանակ ցույց տվող մի շարք բառեր. *Արամենք, Վարդանանք, կիրակի, առավոտ, չորեքշաբթի, ամառ, գարուն, ձմեռ* և այլն[3]:

[3] Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, 2007, էջ 234-238:

Ներգոյականը ժամանակակից հայերենի միակ հոլովն է, որ գործածվում է միայն պարագայական նշանակությամբ՝ ցույց տալով, ինչպես նշեցինք, տեղը, որի մեջ կան սահմաններում կա կամ լինում է մի բան, և ժամանակը, որի մեջ կամ ընթացքում կա կամ լինում է մի բան:

Ուրեմն՝ ներգոյականի ընդհանուր հոլովական իմաստը կարելի է համարել պարունակման իմաստը, որը տեղի իմաստը ունեցող բառերի հետ հանդես է գալիս որպես տեղային պարունակություն, իսկ ժամանակի իմաստ ունեցող բառերի հետ՝ ժամանակային պարունակություն:

Ներգոյականը մյուս հոլովներից տարերվում է ոչ միայն իմաստային. այլև կիրառական-ծավալային սահմանափակությամբ: Ժամանակակից հայոց լեզուն ընդհանրապես չհոլովվող բառեր չճանաչելով հանդերձ՝ ունի բառերի մի շարք խմբեր, որոնք ներգոյական հոլով չեն կազմում կամ որոնց ներգոյականը սովորական չէ: Այսպես են, օրինակ, մարդկանց ու կենդանիների հատուկ ու հասարակ անունները և բազմաթիվ սովորական բառեր:

Բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում արտահայտել այսպիսի բառերի ներգոյականի իմաստը, կիրառվում է սեռականը մեջ կապի հետ, օրինակ՝ Գուրգենի մեջ, բանվորի մեջ, իմացության մեջ, գարնան մեջ և այլն: Մեջ կապը դրվում է նաև բուն ներգոյական ունեցող բառերի վրա, օրինակ՝ քաղաքում-քաղաքի մեջ, ջրում-ջրի մեջ, ամսում-ամսվա մեջ, տարում-տարվա մեջ և այլն: Սրանք համանիշներ են՝ իմաստային և ոճական կիրառության տարբերություններով[4]:

[4] Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն,Երևան, 2004, էջ 70:

ԳԼՈՒԽ 2. ՀՈԼՈՎՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ամեն մի հոլովի ուսուցումը կատարելիս պետք է ելնել հոլովի իմաստից՝ առաջնորդվելով հիմնականում հետևելով. ա) ուղղականի ուսուցումը կապել ենթակայի հետ, բ) սեռականի ուսուցումը կապել պատկանելիության գաղափարի հետ, գ) տրականի ուսուցումը կապել ենթակայի գործողության հանգման առարկայի գաղափարի հետ, դ) հայցականի ուսուցումը կապել ենթակայի գործողությունն իր, վրա կրող առարկայի հասկացության հետ, ե) բացառականի ուսուցումը կապել ենթակայի գործողության ելակետ հանդիսացող առարկայի հասկացության հետ, զ) գործիականի ուսուցումը կապել ենթակայի գործողության գործիքի հետ, միջոցի հետ, է) ներգոյականի ուսուցումը կապել ենթակայի գործողության կատարման առարկայական տեղի հետ (սենյակում, դաշտում, փողոցում, բաժակում):

Ամենից առաջ երեխաներին գաղափար պետք է տալ գոյականի անվան փոփոխության, այսինքն՝ հոլովման մասին, ապա նաև այդ փոփոխության կայուն ձևերի՝ հոլովների մասին, իսկ ավելի ուշ՝ երեխաներին վարժեցնել այդ փոփոխության ձևերի գործնական կիառման, այսինքն՝ առաջադրած գոյականի անուններն ըստ կայուն ձևերի հարացույցի ինքնուրույն կերպով փոփոխելու կամ հոլովելու մեջ: Այդ բանին պետք է հասնել աստիճանաբար:

Ուսուցիչը գրատախտակին գրում է անձ և իր ցույց տվող երկու գոյական անուններ և դրանց հոլովման մի քանի ձևերով նախադասություններ կազմում՝ բոլոր նախադասությունների մեջ ընդգծելով համապատասխան բառը՝ երեխաների ուշադրությունն այդ բառերի բառաձևի փոփոխությունների վրա հրավիրելով:

դաշտ	աշակերտ
1. Դաշտը ծածկված է ծաղիկներով:	1. Աշակերտը լավ է սովորում:
2. Դաշտի խոտը հնձում են ամռանը:	2. Աշակերտի գիրքը նոր է:
3. Կոմբայնը մոտեցավ դաշտին:	3. Ուսուցիչը մոտեցավ աշակերտին:
4. Տրակտորը վարեց դաշտը:	4. Ուսուցիչը շատ է սիրում աշակերտին:

5. Թռչունները հեռացան դաշտից:	5. Այդ աշակերտից բոլորը գոհ են:
6. Տրակտորն անցավ դաշտով:	6. Ուսուցիչն հպարտանում է իր լավ աշակերտով:
7. Ծաղիկներն աճում են դաշտում:	7. (Այդ աշակերտի մեջ մեծ փոփոխություն է կատարվել):

Բերված նախադասությունների մեջ *դաշտ և աշակերտ* բառերի բառաձևերի փոփոխություններն ուսումնասիրելուց հետո կարելի է ձեռնամուխ լինել նախադասությունների մեջ այդ բառերի պաշտոնները որոշելու աշխատանքին:

դաշտ(ը) - ենթակա,
դաշտի – ենթակայի լրացում,
Դաշտին – ստորոգյալի լրացում,
դաշտը – ստորոգյալի լրացում,
դաշտից – ստորոգյալի լրացում,
դաշտով – ստորոգյալի լրացում,
դաշտում- ստորոգյալի լրացում:

աշակերտ(ը) - ենթակա,
աշակերտի – ենթակայի լրացում,
աշակերտին – ստորոգյալի լրացում,
աշակերտը – ստորոգյալի լրացում,
աշակերտից – ստորոգյալի լրացում,
աշակերտով – ստորոգյալի լրացում,
աշակերտում- ստորոգյալի լրացում:

Այսպիսով, գոյական անվան բառաձևի ու նախադասության մեջ այդ բառի արտահայտած պաշտոնի փոփոխությունը սերտորեն կապվում են միմյանց հետ և երեխաների համար պարզ է դառնում, որ բառի արտաքին փոփոխությունը փոխվում է նաև նրա հարաբերությունը նախադասության մեջ նրա հետ կապակցության մեջ մտած մյուս բառերի նկատմամբ: Հետևաբար բառերի փոփոխության այդ ձևերի ուսումնասիրությունը որոշակի արժեք ու կարևորություն է ստանում երեխաների համար:

Այս վերլուծական աշխատանքից դժվար չէ եզրակացնել, որ 1) գոյական անունը փոփոխվում է նաև վերջավորությամբ, որով պայմանավորված է նրա պաշտոնը նախադասության մեջ, 2) գոյական անվան վերջավորության փոփոխությունը կոչվում է հոլովում, 3)գոյական անունը կարող է փոփոխվել յոթ ձևով, այդ ձևերից յուրաքանչյուրը կոչվում է հոլով, 4) չնայած գոյական անունը կարող է փոփոխվել 5 ձևով, բայց հայերենն ունի 7 հոլով:

Այստեղից կարելի է ընդհարացնել, որ գոյական անունը փոփոխվում է թվով ու հոլովով և ինչպես թվի փոփոխվելիս հարցը ևս փոխվում է, այնպես էլ բառի վերջավորությունների փոփոխման ժամանակ բառին առաջադրվող հարցերը փոփոխվում են, ուստի այդ հարցերը ևս պետք է իմանալ, որպեսզի հարցի ու բառի վերջավորության օգնությամբ կարողանանք ճանաչել գոյականի հոլավաձևը: Երեխաների ուշադրությունը դարձնելով գրատախտակին գրված *դաշտը և աշակերտը* բառերի 7 ձևերի վրա՝ կարելի է ասել, որ դրանցից յուրաքանչյուրը կոչվում է հոլով և ունի իր հատուկ անունը, իսկ փոփոխված բոլոր ձևերը միասին վերցրած կոչվում են հոլովում, ապա կարելի է ասել հայերենի 7 հոլովների (ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական) անունները, դրանք շարքով գրել գրատախտակին և որոշել դրանց հարցերը[5]:

Հոլովների ուսուցումը պիտի վարել նախադասության միջոցով, նախադասության մեջ ներկայացնել հոլովների հարացույցը, որ աշակերտները տեսնեն նրանց թե գործառնությունը և թե ինչ հարցի են պատասխանում: Այս նպատակով հոլովում ենք մի անձի անուն, մի իրի: Նախ գրում ենք հոլովները, հետո հարցը, հետո գոյականը, որին հաջորդում են նախադասության մյուս անդամները: Գոյականները, որ մի այունակ են կազմում, պիտի ընդգծել: Այսպես.

Իր

Եզակի թիվ	Հոգնակի թիվ	
Ուղղ.-ի՞նչ(ը)- գետ(ը) վարարել է:	Ինչե՞ր(ը)	գետեր(ը)
Սեռ.- ինչի՞ -գետի ջուրը պղտոր է:	Ինչերի՞	գետերի
Տր.- ինչի՞(ն)- գետի(ն) մոտեցավ նա:	Ինչերի՞ն	գետերի(ն)
Հայց.- ի՞նչ(ը)- գետ(ը) թեքեցին ձախ:	ինչե՞ր(ը)	գետեր(ը)
Բաց.- ինչի՞ց- գետից ջուր վերցրին:	ինչերի՞ց	գետերից
Գործ.- ինչո՞վ- գետով ոռոգում են:	ինչերո՞վ	գետերով
Ներգ.-ինչու՞մ- գետում ձուկ չկա:	ինչերու՞մ	գետերում

Անձ

[5] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 362-364:

Եզակի թիվ	Հոգնակի թիվ	
Ուղղ.-ո՞վ- երեխա(ն) խաղում է:	ովքե՞ր	երեխաներ(ը)
Սեռ.- ու՞մ- երեխայի կոշիկը մաքուր է:	ու՞մ	երեխաների
Տր.- ու՞մ- երեխայի(ն) մոտեցավ մայրը:	ու՞մ	երեխաների(ն)
Հայց.- ու՞մ- երեխայի(ն) տարան դպրոց:	ու՞մ	երեխաների(ն)
Բաց.- ումի՞ց- երեխայից վերցրեց գիրքը:	ումի՞ց	երեխաներից
Գործ.-ումո՞վ- երեխայով հպարտ է մայրը:	ումո՞վ	երեխաներով
Ներգ.-չունի	չունի	չունի

Այնուհետև պարզաբանում ենք որոշյալ և անորոշ առումները: Մի առանձին աղյուսակ չկազմելու համար որոշյալ առումն արտահայտում ենք փակագծերում դրված հոդով: Բայց պիտի բանավոր նախադասություններում ցույց տանք դրանք: Այսպես՝ մի գետ վարարել էր- մեր գետը վարարել էր, մոտեցանք մի գետի- մոտեցանք մեր գետին, մի գետ թեքեցին ձախ- մեր գետը թեքեցին ձախ: Այս նույն ձևով պարզաբանում ենք անձի անվան հոլովումը՝ որոշյալ և անորոշ առումներով:

Այս աշխատանքից հետո անցնում ենք հոլովների առանձին-առանձին ուսուցմանը: Արդեն վերոհիշյալ նախադասությունից աշակերտները տեղեկանում են, որ ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է, կատարում է ենթակայի գործողություն: Սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում է մի ուրիշ առարկա: Անդրադառնալով սեռականի կազմությանը՝ ուսուցիչը բացատրում է, որ այդ հոլովը կազմում է՝ ա) վերջավորություններով (ի, ու, ան, վա, ոջ, ց), բ)առանց վերջավորության, բառամիջի ձայնավորների փոփոխությամբ՝ հերթագայությամբ. ու-ն փոխվում է ա-ի (տուն-տան), իսկ այ-ը՝ ո-ի (հայր-հոր): Առաջինը կոչվում է վերջավոր կամ արտաքին հոլովում, իսկ երկրորդը՝ անվերջավոր կամ ներքին հոլովում: Ուսուցիչը այս բանը կարող է բացատրել հենց աշակերտի միջոցով: Գրատախտակին իրար տակ գրել է տալիս յուրաքանչյուր հոլովումից մի-մի օրինակ և կողքին՝ սեռականի հարցը, իսկ աշակերտները պատասխանում են և գրում հարցի կողքին: Ձախ կողմում արտաքին հոլովումները, աջ կողմում՝ ներքին: Այսպես.

քար – ինչի՞ - քարի **ի**	հայր - ու՞մ – հոր **ո**
օր – ինչի՞ - օրվա **վա**	մայր – ու՞մ – մոր **ո**
դուռ – ինչի՞ - դռան **ան**	տուն – ինչի՞ - տան **ա**
գարի – ինչի՞- գարու **ու**	արյուն – ինչի – արյան **ա**
քույր - ու՞մ – քրոջ **ոջ**	միություն – ինչի՞ - միության **ա**
Մարոյենք – ու՞մ – Մարոյենց **ց**	սյուն – ինչի՞ - սյան **ա**

Անցնելով տրական հոլովի ուսուցմանը՝ բացատրում ենք նրա գործողությունը՝ այն, որ տրականով գոյականը լինում է բայի լրացում՝ հանգման կամ մատուցման անուղղակի խնդիր: Ապա շեշտը դնում ենք հոդառության վրա: Գրատախտակին գրում ենք մի քանի նախադասություններ, որոնցում առկա են այս երկու հոլովները, ապա հանդիպում ենք իրար և պարզում տարբերությունը: Օրինակ՝ *Աշոտի* գիրքը տվեցինք *Արամին*: *Գեղամի* տղան մոտեցավ *սեղանին*: *Ծառի* ճյուղը կպավ Անտոնի *երեսին*: Ընդգծում ենք սեռական ու տրական հոլովները և պարզում տարբերությունը: Իսկ եթե տրական հոլովը անորոշ առումով է, շեշտը դնում ենք գործառության, պաշտոնի վրա: Ասենք՝ *ծառի* ճյուղը կպավ *մարդու*: Ընդգծում ենք երկու գոյականները և բացատրում, որ ծառի գոյականը կապված է *ճյուղը* գոյականի հետ, նրա պատկանելիությունն է ցույց տալիս, ուրեմն սեռական հոլովով է, իսկ *մարդու* բառը կապված է *կպավ* բայի հետ, նրա խնդիրն է, ուրեմն տրական հոլովով է: Այս դեպքում հարցը մեզ չի օգնի, երկուսին էլ նույն հարցն է տրվում:

Հաջորդ թեման հայցական հոլովն է, որը ներգործական սեռի խնդիր է: Պիտի բացատրենք, որ հայցական հոլովը մեկ նման է ուղղականին, մե էլ՝տրականին: Անձի անունների հայցականը նման է տրականին, իսկ իրի անունների հայցականը՝ ուղղականին: Բերում ենք զուգահեռ երկու նախադասություն, գրում գրատախտակին և ցույց տալիս այդ նմանությունն ու տարբերությունը: Այսպես, Արտավազդը տեսնում էր *բանվորին* և Արտավազդը տեսնում էր *դազգահը*: Նա հարգում էր բարիք ստեղծող *վարպետին* և նա հարգում էր բարիք ստեղծող *աշխատանքը*: Ընդգծում ենք հայցականով դրված գոյականները, բացատրում նրանց նմանությունն ու տարբերությունը: Սա, իհարկե, դժվար չի յուրացվում: Դժվարը ձևով տրականին նմանվող հայցականը ճանաչելն է: Աշակերտը դժվարանում է տարբերել՝ «Նայում եմ *եղբորը* և տեսնում եմ *եղբորը*, մոտեցանք *եղբորը* և *եղբորն* ուղարկեցին սովորելու»

նախադասությունների ընդգծված բառաձրևը: Դժվար է ճանարվում նաև ուղղականաձև հայցականը: Հայցականի այս տարբերակը նույնպես պիտի բացատրենք նախադասության մեջ ուղղականն ու հայցականը հանդիպանդնելով: Այսպես՝ *գնացքը* սլանում է *Թիֆլիս*, *ձուկն* ընկավ *ջուրը*, *քամին* փշրեց *ապակին*, *փոթորիկը* տաշեղի նման տարուբերում էր *նավը*, *տրակտորը* վարում է հողը և այլն: Բերված նախադասություններում ընդգծում ենք ուղիղ ձևով դրված գոյականները և բացատրում, որ առաջինները (գնացքը, ձուկը, քամին, փոթորիկը, տրակտորը) ենթականեր են, ուստի ուղղական հոլովով են, իսկ երկրորդները (Թիֆլիս, ջուրը, ապակին. նավը, հողը) ստորոգյալի լրացումներ են, ուստի հայցական հոլովով են դրված:

Հայցական հոլովը ճանաչելու համար դիմում ենք փոխակերպմանը: Հայտնի է, որ հայցականով դրված ուղիղ խնդիրը ներգործական սեռի բայի խնդիրն է: Երբ ներգործաձև նախադասությունը փոխում ենք կրավորաձևի, ուղիղ խնդիրը փոխվում է ենթակայի, իսկ ենթական՝ անուղղակի խնդրի: Օրինակ՝ փոթորիկը խորտակեց նավը- նավը խորտակվեց փոթորիկից: Առաջին նախադասության մեջ *փոթորիկը* ենթակա է, իսկ *նավը* ուղիղ խնդիր, երկրոդ նախադասության մեջ *նավը* դարձել է ենթակա, իսկ *փոթորիկը*՝ անուղղակի խնդիր (փոթորկից): Ուրեմն պիտի աշակերտներին սովորեցնել այս փոխարկումը: Եթե կասկած հարուցող բառը ներգործական բայը կրավորականի փոխելիս դառնում է ենթակա, ուրեմն նախորդում նա ուղիղ խնդիր է հայցական հոլով, եթե ենթակայի չի փոխվում, ուղիղ խնդիր չէ, ուստի և հայցական չէ: Օրինակ՝ ժողովը Աշոտին նախագահ ընտրեց: Եթե սրա բայը փոխենք կրավորականի, կստացվի՝ Աշոտը ժողովի կողմից նախագահ ընտրվեց: Առաջինում *ժողովը* ենթակա է, *Աշոտը*՝ ուղիղ խնդիր (հայցական), երկրորդում՝ *Աշոտը* դարձել է ենթակա, իսկ *ժողովը*՝ անուղղակի խնդիր (ժողովի կողմից): Անփոփոխ է մնացել *նախագահ* բառը, նշանակում է նա ուղիղ խնդիր չէ:

Անձի անուն հայցականը տրականից տարբերելու համար այն փոխարինում ենք իրի անունով, օրինակ՝ տեսնում եմ *Արսենին* դարձնում ենք տեսնում եմ *գիրքը*: Քանի որ *գիրքը* հայցական է, ուրեմն *Արսենին* նույնպես հայցական է:

Մյուս հոլովների յուրացումը դժվար չէ, քանի որ նրանք ունեն իրենց կայուն վերջավորությունը: Պետք է օգտագործել վերջաբոչությունը և համապատասխան հարցը:

Բացառական հոլովը կազմվում է *ից* կամ *ուց* վերջավորությամբ, նրանով արտահայտվում են նախադասության անջատման և մի քանի այլ անուղղակի խինդրներ ու պարագաներ: Պատասխանում է *ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց* և այլ հարցերին:

Գործիական հոլովը կազմում է *ով* կամ *բ* վերջավորություններով, նրանով արտահայտոժվում են միջոցի անուղղակի խնդիրը և այլ անուղղակի խնդիրներ ու պարագաներ: պատասխանում է *ումո՞վ* կամ *ինչո՞վ, որտեղո՞վ* և այլ հարցերին[6]:

2.1 ՀՈԼՈՎՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ ԽԻԿ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Ստորև ներկայացվում է ԽԻԿ համակարգով ներկայացված դասի պլան: Դասը վերցրված է 7-րդ դասարանի հայոց լեզվի դասագրքից (էջ 27):

Թեման ՝ Գոյականի հոլովները

Նպատակը ՝ Իմանալ գոյականի հոլովների կազմությունը, հոլովման առանձնահատկությունները և կիրառությունները, կազմել նախադասություններ հոլովների տարբեր կիրառություններով:

Կահավորումը ՝ Պաստառ, նշումների թղթիկներ, գունավոր գրիչներ,

Դասի Ընթացքը ՝ ***Խթանում:*** Գոյականի հոլովը բացատրելու համար ուսուցիչը ընթերցանության դասագրքից ընտրում է գոյականի տարբեր հոլովաձևեր ունեցող նախադասություններ: Օրինակ Հ. Սահյանի հետևյալ քառատողը և այն գրում է գրատախտակին:

Անտառում խորին խորհուրդներ կային
Եվ արձագանքներ կային *անտառում*,
Օրոր էր ասում աշունն *անտառին*,
Սակայ *անտառի* քունն չէր տանում:

Ուսուցիչը կարդում է այս քառատողը և ընդգծում անտառ գոյականի կիրառությունները՝ *անտառում, անտառին, անտառի*: Ապա աշակերտների հետ

[6] Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, էջ 182-186:

միասին որոշում են այդ բառերի պաշտոնները, *անտառում՝* տեղի պարագա, *անտառին՝* հանգման անուղղակի խնդիր, *անտառի* հատկացուցիչ: Ապա դիմելով դասարանին հարցնում է, թե անտառ գոյականի այս ձևափոխություններով ի՞նչ արատահայտվեց: Այս քննարկումը ուսուցիչը ավարտում է հետևյալ բնորոշումով՝ գոյականի գործածության յուրաքանչյուր ձև, որով արտահայտվում է նրա պաշտոնը նախադասության մեջ, կոչվում է հոլով, բոյոր ձևերը միասին կոչվում են հոլովում:

Իմաստի ընկալում

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը սկսում է թվել հոլովները, տալ սահմանումները և միաժամանակ գրատախտակին գծելով M-աձև աղյուսակ, սյունակներում լրացնում է հոլովի անունը, հարցը և նախադասության մեջ զբաղեցրած պաշտոնը: Աշակերտներին հանձնարարում է բերել օրինակներ, սկզբում բառեր, այնուհետև նախադասություններ հոլոված բառերի պաշտոնները որոշելու համար:

Սահմանումներին ծանոթանալուց հետո, դասը ամրապնդելու նպատակով կատարում են դասարանային վարժություններ:

<u>Վարժություն 1: Բացել փակագծերը և որոշել ձևափոխած բառերի հոլովները:</u>

1.Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի (սիրտ): 2. Բոց էր բարձրանում խոր (թոնիր): 3. Լեռներից գյուղի վրա իջնում էին (այծեր) ու (ոչխարներ) հոտերը: 4. (Գիժ) պես աղմկում էր առուն: 5. (Եկեղեցի) խաչը թեքվեց, ճռճվեց ինչպես ճյուղը: 6. Հյուրերը ժամանեցին (օր) երկրորդ կեսին: 7. Այդ խոսքերից (այրի) թախծոտ դեմքին մի խորհրդավոր ժպիտ երևաց: 8. Նա չէր ուզում կառչել որևէ (միտք): 9. Կայծակն սկսում է ակոսել (գիշեր) պես սև ամպերը: 10. Նույն ոգով նա դաստիրակել էր իր (դուստր): 11. (Երդում) զինվորները անցան խորհանի հետևում: 12. (Գևորգ Մարզպետունի) (առաջնորդություն) հայերը հաղթանակ տարան: 13. (Բժիշկ) կցկտուր արտասանած բառերըալեկոծեցին դեռատի (կին) սիրտը: 14. Անտառում ուժեղ (քամի) այնպես են ճռնչում լորենիները, որ հեռվից լսելիս կարելի է կարծել թե (կացին) ծառ են կտրում:

<u>Վարժություն 2: Կազմել տրված գոյականների գործիական հոլովաձևը և գործածել նախադասության մեջ:</u>

Արյուն, մահ, սկեսուր, լռություն, ուսում, դասընկեր, տիկին, ուրախություն, ծնունդ, կորուստ, կնքահայր, բազմություն, ծաղիկ, ձեռքբերում:

Վարժություն 3: Առանձնացնել ներգոյական հոլով չունեցող գոյականները:

Հորեղբայր, ամիս, ընկերուհի, Վարդանանք, անձրև, քույր, ձուկ, կեսօր, շարժուն, ծերունի, սուգ, գիրք, լույս, կորուստ, առավոտ, միտք, պատիվ, հագուստ, թերակղզի, խնդիր, սառցալեռ, տարի, սեր, նուռ, վայրկյան, ուսում, խնամք, երկիր, հեքիաթ, ձեռք, հայրենիք, զմրուխտ, գիշեր, դեմք, ականջ, քնար, բազմոց, գավաթ, զնգոց, կղզի, բժիշկ, իմպրեսոնիզմ, վաշտ, նամականի, ակնեղեն, երամակ[7]:

Կշռադատման փուլ

Դասը ամփոփելու համար ուսուցիչը կիրառում է հետևյալ մեթոդը:



Ուսուցիչը աշակերտներին տալիս է 5 րոպե ժամանակ տետրում լրացնելու համար:

Գնահատում: Գնահատումը կատարվում է ըստ աշակերտների ցուցաբերած ակտիվության:

Տնային աշխատանք: Հանձնարարվում է տանը կազմել հոլովակազմիչների տախտակ: Գրել 10 տարբեր գոյականներ, որոնք ներգոյական հոլով չունեն: Այս հարացույցը սովորելը երեխայի համար դժվար չէ, հարկավոր է վերջավորությունները անգիր անել տալ: Հարացույցի յուրացմանը օգնում են նաև հարցերը և նախադասության մեջ հոլովների կատարած պաշտոնները:

Ինչպես նաև դասագրքում յուրաքանչյուր թեմայից հետո առկա են ամփոփիչ առաջադրանքներ: Դրանց կատարումը կօգնի աշակերտներին ամրապնդել գիտելիքները:

[7] Սանթրյան Լ.Ս., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2014, էջ 23-24:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով «Գոյականի հոլովների ուսուցում» թեման՝ եկանք հետևյալ եզրակացություններին.

- Գոյական անվան հոլովով պայմանավորված փոփոխությունը պետք է դպրոցում լավ ուսումնասիրվեն, որովհետև դրանք դառնալու են այդ խոսքի մասի բնութագրման և մյուս խոսքի մասերից նրա տարբերակման հիմնական չափանիշները:
- Գոյականի շուրջը տարվող թե՛ մարզողական և թե՛ վերլուծական ու կիրառական վարժությունների ծանրության կենտրոնը պետք է տեղափոխել նրա բոլոր հատկանիշների մասին գաղափար տալուց հետո, որպեսզի այն իր բոլոր հատկանիշներով ճանաչվի և գնահատվի:
- Հոլովաձևերի ուսումնասիրության և դասավանդման գործընթացը պետք է կազմակերպել արդյունավետ, գրագետ մեթոդներով և նպաստել սովորած գիտելիքները խոսքի մեջ գործնականորեն կիրառելու կարողությունների զարգացմանը:
- Հոլովները որոշելիս պետք է ելնել հոլովական իմաստի և հոլովական ձևի այն յորահատուկ միասնությունից, որ պատմականորեն մշակել է տվյալ հասարակությունը և որպիսիք ռեալ (լեզվական և իմացարարական ու տրամաբանական) արժեք ունեն տվյալ հասարակության համար, ըստ որում առաջնությունը պետք է տալ հոլովական իմաստին:
- Այսպիսով, ուրեմն, ժամանակակից հայոց լեզուն ունի յոթ հոլով, որոնցից միայն երեքն են ըստ ձևի հաստատուն կերպով զանազանվում, դրանք են՝ բացառականը, գործիականը և ներգոյականը: Մյուս չորս հոլովները միայն ձևով որոշվել չեն կարող, ձևական դրսևորմամբ իրար հաճախ նման լինելու հետևանքով, դրանք են՝ ուղղականը (ըստ ձևի երբեմն նմանվում է հայցականին), սեռականը (ըստ ձևի հաճախ նմանվում է տրականին), տրականը (ըստ ձևի հաճախ նմանվում է սեռականին և հայցականին) և հայցականը (ըստ ձևի նմանվում է կամ ուղղականին, կամ տրականին):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, Երևանի Համալսարանի հրատարկչություն, 2004, 431 էջ:
2. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, 734 էջ:
3. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Հրեղինակային հրատարակություն, Երևան, 2010, 263 էջ:
4. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1987, 335 էջ:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, 396 էջ:
6. Սանթրյան Լ.Ս., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, ՀԱԱՀ հրատարկչություն, 2014, 88 էջ:
7. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, 562 էջ: